ԵՊՀ ԻՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-20ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
**2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ** ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
***ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ***
**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ամսաթիվ՝ 26.10.2021թ.

| ՌՕ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ | **Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում** | **Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)** | **Ի՞նչ չի իրականացվել և ինչու՞** | **Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում** |
|---|---|---|---|---|
| Մասնաճյուղի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների /ԳԱՑ 2015-20/ համալրում և վերլուծություն, հաշվետվության կազմում: | ԵՊՀ ԻՄ ՌՕ-ով նախատեսված արդյունքների ձեռքբերման գնահատում, բացթողումների և խնդիրների վերհանում: | 1.Բաժինը 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրականացրել է մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-ի) վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, համալրում և վերլուծություն: Ընթացիկ ուստարվա սկզբին ստորաբաժանումներից հավաքագրվել է համապատասխան ցուցանիշները, ըստ այդ ցուցանիշների մասնաճյուղի գործունեության վերլուծությունները և կազմվել է 2015-20թթ. մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների զեկույցը:<br>2. 2021թ. մարտին 2015-20թթ. մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների զեկույցը (ԳԱՑ 2015-20) ներկայացվել և հաստատվել է մասնաճյուղի ԳԽ-ում:<br>2. Կազմակերպվել է ԳԱՑ 2015-20-ի գունավոր տպագրությունը, տեղադրվել է մասնաճյուղի կայքում և ուղարկվել է բոլոր ստորաբաժանումներին:<br>3.ԳԱՑ 2015-20 վերլուծությունների հիման կազմվել է մասնաճյուղի բացթողումների և խնդիրների վերաբերյալ ամփոփ փաթեթ:<br>4.Կազմվել է բարելավված և չբարելավված, կամ նվազած ցուցանիշների ցանկ՝ պատճառների վերլուծություններով: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.2.1. Աջակցել «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի» (ԵԴԱԱՓՓԿ) աշխատանքների ակտիվացմանը՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտություններն արդիականացնելու ու զարգացնելու նպատակով:<br>1.2.2.Վերանայել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման գործող մեխանիզմները, մշակել նոր մեխանիզմներ՝ ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը նպաստելու համար:<br>1.2.3.Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ: | Լավագույն փորձի տարածում ՊԴ կազմի շրջանակներում, դասավանդման և ուսումնառության արդի մեթոդներին տիրապետող երիտասարդ դասախոսներ:<br><br>Ուսուցման ժամանակակից մեթոդներով ու տեխնոլոգիաներով դասավանդող դասախոսների քանակի ավելացում:<br><br>Ուսանողների վերջնարդյունքների վրա հիմնված գնահատման կիրառվող նոր ձևեր: | «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնին» աջակցման շրջանակներում և դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտություններն արդիականացնելու ու զարգացնելու նպատակով բաժինը **2020թ. սեպտեմբեր-հոկտեմբերին** կատարել է գործող արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևերի և մեթոդների հավաքագում, ուսումնասիրություն և դրանց հիման վրա մշակել է մի քանի ուղեցույցներ.<br>-“Kahoot” հարթակից օգտվելու և առաջադրանքներ կազմելու և գնահատելու ուղեցույց,<br>- “Mentimetr” առցանց հարթակից օգտվելու ուղեցույց,<br>-«MOODLE» հեռավար ուսուցման համակարգից դասախոսների և ուսանողների օգտվելու մեթոդական ուղեցույց<br>-Գուգլի “Classroom” գործիքը ուսուցման և գնահատման նպատակով կիրառելու ուղեցույց:<br>Ուղեցույցները գտնվում են խմբագրման փուլում, խմբագրումն ավարտելուց հետո ԿԲՎԴ բաժնի հետ համատեղ կկազմակերպվեն վերապատրաստման | Չեն մշակվել և չեն առաջարկվել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: | |
| 1.2.5. Մշակել դասախոսի կողմից դասընթացների փաթեթները (պորտֆոլիոները) որակի ապահովման մեխանիզմներով համալրելու մեթոդական ուղեցույց: | Որակի ապահովման մեխանիզմներով համալրված դասընթացների փաթեթներ: | Բաժինը պարբերաբար տրամադրել է խորհրդատվություն “Դասընթացների փաթեթներ”-ի մշակման վերաբերյալ: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **1.2.6.** Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու նպատակով:<br>**8.4.1.** Մշակել էթիկայի սկզբունքներ և բարեվարքության կանոններ մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների համար: | Առանց գրագողության ազնիվ ուսումնառություն ապահովող մեխանիզմներ: Էթիկայի սկզբունքները և բարեվարքության կանոնները պահպանող աշխատակիցներ և ուսանողներ: | Մշակվել է «Էթիկայի կանոնագիրք», որում սահմանված են էթիկայի սկզբունքները, ակադեմիական ազնվություն և անազնվություն, ԵՊՀ ԻՄ ղեկավարների, վարչական և ակադեմիական աշխատակազմի և ուսանողների էթիկական վարքագծի կանոնները, կարգապահական տույժերը և նրանց տրման ընթացակարգը, էթիկայի հանձնաժողովի իրավասությունները և պարտականությունները: Կանոնագիրքը քննարկվել է ստորաբաժանումներում, վերախմբագրվել է մասնաճյուղի իրավախորհրդատուի կողմից և հաստատվել է ԳԽ-ում (26.02.2021թ.): | | |
| 1.3.1. Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովների հիման վրա ստեղծել կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: | Կրթական ծրագրերի որակի բարելավում: | 2018թ.-ից բաժինը ստեղծել է որակի գործընթացներին աջակցող ուսանողական խումբ, որը մասնակցում է հարցումների կազմակերպմանը, իրականացնում է կոնկրետ խնդիրների վերաբերյալ հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ և այլն:<br>1. Բաժինը տարբեր մեխանիզմներով (հիմնականում հարցումների միջոցով) պարբերաբար կատարում է արտաքին և ներքին շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրություն, վեր է հանում խնդիրները, հավաքագրում է նրանց առաջարկները, կատարում դրանց վերլուծություն: **2020թ. նոյեմբերին** վերանայվել են բաժնի կողմից ամենամյա անցկացվող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բավարարվածության ուսանողական, դասախոսական և վարչական կազմի առցանց հարցման հարցաշարերը, նրանց համար կազմվել են գործիքի անձնագրեր, ընթացքի մեջ է համապատասխան կանոնակարգի մշակման գործընթացը:<br>Վերանայվել է նաև 2019թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին բաժնի ֆեյսբուքյան էջի միջոցով իրականացված մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հասարակության կարծիքի ուսումնասիրության հարցաշարը և 2021թ.-ի հունվարին հարցումն անց է կացվել : | Հարցումն անց է կացվել, բայց մասնակիցների ցածր տոկոսի պատճառով ստացված արդյունքները չեն վերլուծվել: | |
| 1.3.2.Վերանայել և գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը: | Բարելավված կրթական ծրագրեր | Մասնաճյուղի ԿԲԴՎ բաժնի հետ միասին վերանայվել է կրթական ծրագրերի մշտադիտարկման և պարբերական վերանայման կարգը, որը հաստատվել է ԳԽ-ում (30.04.2021թ.):<br>**2020թ. սեպտեմբեր-հոկտեմբեր** ամիսներին բաժինն աջակցել և շարունակում է աջակցել առկա ուսուցմամբ «Մեխատրոնիկա և ռոբոտոտեխնիկա» բակալավրական կրթական ծրագրի առաջարկի | Կարգը չի գործադրվել | 2021-22 ուստարում ըստ ժամանակացույցի ԿԲՎԴ բաժնի հետ միասին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հայտի կազմման աշխատանքներին: | | գործարկել |
| **5.2.1.**Մշակել տեղեկատվա-կան համակարգերի զարգացման հայեցակարգ | Արդի տեղեկատվական համակարգերի կիրառում ուսումնագիտական գործընթացում: | | Չի մշակվել | |
| **6.1.1.**Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավարարվա-ծությունը մատուցվող ծառա-յություններից:<br><br>Ուսումնասիրել և վեր հանել ներքին և արտաքին շահակիցների կարիքները: | Կրթական և այլ մատուցվող ծառայություններից բավարարված ուսանողներ | Տարբեր մեխանիզմներով՝ հարցումների, հանդիպումների միջոցով կատարվել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրություն, վեր են հանվել խնդիրները, հավաքագրվել են նրանց առաջարկները, կատարվել է դրանց վերլուծություն և **<u>կազմվել է խնդիրների և առաջարների ամփոփ փաթեթ</u>**: Այս գործընթացներում բաժնին աջակցել է դեռևս 2018թ.-ին ստեղծված և պարբերաբար վերանայվող ուսանողական աշխատանքային խումբը:<br>2020թ. դեկտեմբերին մշակվել են հետազոտական աշխատանք-ների կազմակերպումից և գնահատումից ուսանողների և դասախոսների բավարարվածության ուսումնասիրության երկու հարցաշարեր:<br>Խնդիրները և առաջարկները հավաքագրվել են հետևյալ հարցումների արդյունքների վերլուծությունից և հանդիպում-քննարկումներից.<br>- Առցանց ուսուցման վերաբերյալ ուսանողական և դասախոսական հարցումներ (2020թ. հունիս, հուլիս),<br>- Ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցում (2021թ.մայիս),<br>- Մասնաճյուղից բավարարվածության վերաբերյալ ուսանողական հարցում (2021թ. հունիս),<br>- Հետազոտական աշխատանքների իրականացման և գնահատման վերաբերյալ ուսանողական և դասախոսական հարցումներ (2021թ. մարտ, հուլիս),<br>- Մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների համակազմի վերլուծություն (2020թ. սեպտեմբեր, հոկտեմբեր),<br>- Մասնաճյուղի ինստիտուցիոնալ ինքնագնահատում (2020թ. հունվար-հուլիս),<br>- Ավարտական կուրսերի ուսանողների հետ հանդիպումներ (2020թ. մայիս),<br>- ՈԱԿ-ի հետ փորձագիտական առցանց հանդիպումից հետո ԻԿՄ կրթական ծրագրի ուսանողների հետ հանդիպում- | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | քննարկում (2020թ. ապրիլ),<br>- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքներ (2020թ. մայիս),<br>- մասնաճյուղի վերաբերյալ հասարակության շրջանում անցկացված հարցում (2021թ. հունվար) և այլն: | | |
| 6.1.2. Զարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները: | Ուսումնական գործընթացում պլանավորված և անխափան իրականացվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայություններ: | Լրացուցիչ խորհրդատվական աշխատքներն իրականացվում են աբիոններում կիսամյակի սկզբին կազմված ժամանակացույցի միջոցով, նաև դասախոսների նախաձեռնությամբ: Ըստ ուսումնասիրությունների, այդ ծառայությունները ամբողջությամբ չեն իրականացվում և ուսանողները ակտիվ մասնակցություն չեն ցուցաբերում: Չնայած ուսանողների նախաձեռնությամբ բարձր կուրսեցիներն աշխատում են ցածր կուրսի ուսանողների հետ: Այս ուղղությամբ, այսինքն լրացուցիչ խորհրդատվական ծառայությունների արդյունավետության բարձրացման համար բաժինը նոր առաջարկ չի ներկայացրել: | | |
| **6.1.10.**Ապահովել շրջանավարտների հետ մասնաճյուղի և առանձին ֆակուլտետների շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Մասնաճյուղին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները: | Շրջանավարտների կողմից մասնաճյուղին և տարբեր ֆակուլտետ-ների ֆինանսական, նյութական, տեխնիկա-կան կամ ուսումնական տարաբնույթ աջակցության ծրագրերի և նվիրատվությունների իրականացում: | Շրջանավարտներին հետ համագործակցության և նրանց կողմից մասնաճյուղին աջակցության ծրագրեր չեն մշակվել: | | |
| **8.3.2.**Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել մասնաճյուղի նոր կանոնադրությանը: | Լրամշակված և նորացված ներքին իրավական ակտեր: | Վերանայվել է կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգը:<br>….. հարցումների համար մշակվել են հետազոտության գործիքի անձնագրեր: | Քանի որ հարցումների կազմակերպման ձևերը փոխվել են և իրականացվում են նաև նոր հարցումներ անհրաժեշտություն կա վերանայելու հարցումների անցկացման կարգերը, իսկ նորերի համար կազմել նոր կարգեր: | 2021թ. հուլիս, սեպտեմբեր ամիսներին մշակել բոլոր հարցումների համար նոր կարգեր: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8.3.4. Բարելավել ԵՊՀ ԻՄ-ում ներքին աուդիտի համա-կարգը և նրա իրականացումը: | Աուդիտի համակարգի կարևորության և նրա իրականացման նկատ-մամբ վստահության ձեռքբերում: | | Անդրադարձ չի կատարվել ԵՊՀ ԻՄ-ում ներքին աուդիտի համա-կարգին և նրա իրականացմանը: | |
| 8.3.5. Գործարկել տե-ղական և արտերկրյա բուհերի հետ ինստի-տուցիոնալ համեմա-տական գնահատման (բենչ-մարքինգի) համակարգը: | Բոլոր ստորաբա-ժանումներում տեղա-կան և արտերկրի բու-հերի համապատաս-խան գործընթացների հետ համեմատական գնահատումների իրա-կանացում և արդյունք-ների վերլուծում: | Մասնաճյուղն ունի մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականություն (Հաստատված՝ ԳԽ, 22.03.2014թ.):<br>2020թ.հունվար-մարտ ամիսներին բաժինը համակարգել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացը, որի ընթացքում խորհրդատվություններ է տրամադրել մասնաճյուղի տարբեր գործընթացների վերաբերյալ տեղական և արտասահմանյան բուհերի համապատասխան գործընթացների հետ համեմատական վերլուծություններ կատարելու վերաբերյալ:<br>Մի շարք գործընթացների վերաբերյալ կատարվել են համեմատական վերլուծություններ, որոնք օգտագործվել են ինքնավերլուծության զեկույցում (http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2021/01/EPH_IM_SER_Havelvac-2020.pdf ) և տեղադրվել են մասնաճյուղի պաշտոնական կայքի «Կրթության որակի կառավարում» էջում (http://ijevan.ysu.am/comparative-analysis/ ).<br>1. Կրթամասերի համեմատական վերլուծություն ըստ կառուցամասերում դասընթացների բաշխվածության («Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի օրինակով) (http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2020/07/Havelvac_3.4.4_finansner_modulner.pdf )<br>2. Կրթամասերի համեմատական վերլուծություն ըստ դասընթացների («Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի օրինակով) (http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2020/07/Havelvac_3.4.4_Informatika_modulner.pdf )<br>3. Ուսումնական պլանի համեմատական վերլուծությունը «Պատմություն» ԿԾ-ի համար (http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2020/07/Havelvac_3.4.4_patm.pdf )<br>4. Մասնագիտության կրթական ծրագրի համեմատական վերլուծությունն ըստ ծրագրի շրջանավարտների ապագա | Ընթացքի մեջ է ինստիտուցիոնալ համեմատական գնահատման (բենչ-մարքինգի) համա-կարգի մշակումը | 2021-22 ուստարում մշակված համակարգը ներկայացնել քննարկման և հաստատման |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կարիերայի (http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2020/07/Havelvac_3.4.5_gorc_tirujt.pdf )<br>5. Դասավանդման և ուսումնառության մեթոդների համեմատություն «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Պատմություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա (ԻԿՄ)» կրթական ծրագրերի օրինակով (Հավելված 3.2.2)<br>6. Ուսանողի գնահատման մեթոդների համեմատություն «Պատմություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի օրինակով (Հավելված 3.3.2)<br>7. Մասնագիտության կրթական ծրագրի կառուցվածքի համեմատական վերլուծություն (ԵՊՀ ԻՄ , Middlesex University, ՀՊՄՀ և ՌԴ պ/չ կրթական ծրագրերի օրինակով) (Հավելված 3.4.2)<br>8. Մասնագիտության կրթական ծրագրի համեմատական վերլուծությունն ըստ կառուցամասերի և կառուցամասերում կրեդիտների բաշխվածության (Հավելված 3.4.3) | | |
| 8.4.6.Մասնաճյուղի կայքէջի զարգացում՝ ապահովելու ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:<br>9.1.3.Մասնաճյուղի կայքէջը դարձնել եռալեզու և միջազգայնացման գործընթացներին նպաստող: | Մշտապես թարմացվող, հարուստ և արդի բովանդակությամբ պաշտոնական կայք, հանրության բավարարված արձագանքներ:<br>Եռալեզու կայէջի առկայություն: | Բաժինը պարբերաբար առաջարկություններ է ներկայացրել մասնաճյուղի պաշտոնական կայքի արդյունավետության բարելավման, հարստացման, թափանցիկության ապահովման ուղղությամբ: Արտաքին կապերի բաժնի հետ համատեղ վերախմբագրվել են բոլոր բաժինները, մշտապես թարմացվում է ամբողջ տեղեկատվությունը:<br>Հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների անբավարար կարծիքը մասնաճյուղի պաշտոնական կայքի կառուցվածքի և դիզայնի վերաբերյալ բաժնի նախաձեռնությամբ մշակվել է նոր, դինամիկ, դիզայներական հետաքրքիր լուծումներով և տվյալների բազաների վրա կառուցված կայք, որը ներկայացվել է ուսանողների, դասախոսների, մասնաճյուղի աշխատակիցների քննքրկմանը և ստացել է դրական գնահատական: Նոր կայքը կներակայացվի տնօրենությանը՝ ներդրումը փաստելու համար: | Առայժմ դադարեցված է գործող կայքի ռուսերեն և անգլերեն տարբերակների գործունեությունը: | Հայտնի չէ |
| Մասնաճյուղի 2016-20 թթ. ռազմավարական ծրագրից բխող կարճաժամկետ պլանների մշակում, կատարողականի վերլուծություն: | | 1.**2020թ. օգոստոսին** մասնաճյուղի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրից ըստ 2019-20թթ. կատարողականի բաժինը կազմել է 2020թ, սեպտեմբեր-դեկտեմբեր կարճաժամկետ պլան, սեպտեմբերի սկզբին կազմակերպել է կարճաժամկետ պլանի քննարկում, որիղ հետո պլանը հաստատվել է: Բաժինն աջակցել է բոլոր ստորաբաժանումներին ընթացիկ կարճաժամկետ աշխատանքային պլանը կազմելու գործում:<br>2.**2020թ. նոյեմբերին** բաժինը պատրաստել է բաժնի և մասնաճյուղի | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 2019-20 ուստարվա գործունեության հաշվետվությունը։<br>3. **2020թ. դեկտեմբերին** բաժինն իրականացրել է մասնաճյուղի 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2020թ.-ի կատարողականի վերլուծություն։ Ըստ բաժնի կողմից մշակված հատուկ ձևաչափի ստորաբաժանումներից հավաքագրվել են ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ վերլուծու-թյունները, ապա կազմվել է համապատասխան զեկույցը։<br>3. **2021թ. հունվարին** բաժինը կազմել և հաստատել է մասնաճյուղի 2016-20թթ. ռազմավարական ծրագրից բխող 2021թ. հունվարից հուլիս ժամանակահատվածի պլան-ժամանակացույցը։<br>4. **2021թ. հուլիսին** բաժինը մասնաճյուղի տնօրենի հրամանով և աջակցությամբ համակարգել է մասնաճյուղի 2021-26թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը մշակող աշխատանքային խմբի գործունեությունը։ | | |
| Հարցումների և հանդիպում-քննարկումների կազմակերպում։ | Ներքին և արտաքին շահակիցների մասնաճյուղից բավարարվածության բարելավում | 1.**2020թ. նոյեմբերին** վերանայվել են բաժնի կողմից ամենամյա անցկացվող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության ուսանողական, դասախոսական և վարչական կազմի առցանց հարցման հարցաշարերը, նրանց համար կազմվել են գործիքի անձնագրեր, ընթացքի մեջ է համապատասխան կանոնակարգի մշակման գործընթացը։<br>**2. 2021թ. փետրվարին և հուլիսին** բաժինը կազմակերպել է հետա-զոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից ուսանողների և դասախոսների բավարարվածության վերաբերյալ հարցումներ։<br>3. Մասնաճյուղի որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման նպատակով բաժինը **2021թ. փետրվարին** նախապատրաստել և **ապրիլին** իրականացրել է որակի ապահով-ման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) հետ առցանց հանդիպումը մասնաճյուղի ղեկավարության, «Ինֆորմատիկա և կիրառական մնաթեմատիկա» կրթական ծրագրի ղեկավարի, նույն ծրագրի դասախոսական կազմի և ուսանողների հետ։<br>4. **2021թ. ապրիլին** բաժինը նախապատրաստել և **մայիսին** կազ-մակերպել է ստացած կրթությունից մասնաճյուղի 2021թ. շրջանա-վարտների բավարարվածության հարցումը, **հունիսին** իրակա-նացրել է հարցման արդյունքների վերլուծություն և ներկայացրել է մասնաճյուղի ԳԽ-ում քննարկման։<br>5. **2021թ. մայիսին** բաժինը վերանայել է մասնաճյուղից ուսանողա-կան, դասախոսական և վարչական աշխատակազմի բավարար- | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | վածության ուսումնասիրման հարցաշարերը և հուլիսին կազմակերպել է առցանց հարցումները։<br>6. **2021թ. հունիսին** կազմակերպել է ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի հետ հանդիպումներին մասնաճյուղի ներկայացուցիչների մասնակցությունը։ | | |

*Մասնագիտական կրթության որակի*
*ապահովման բաժնի վարիչ՝* */Մ.Ա.Ճաղարյան/*